Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Խ-192[1]-14.06.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 03-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2.

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Պետական կառավարման մարմնի ղեկավարը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները:»:

Հոդված 3.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (*Խ-192*)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	Առաջարկի հեղինակը	***Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը***	***Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)***	***Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը***	***Առաջարկի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը***
1.	Նախագծերի փաթեթի հեղինակ	Առաջարկվել է նախագծերի փաթեթը լրացնել նոր սահմանադրական օրենքի նախագծով	Առաջարկվել է նախագծերի փաթեթում ներառել հետևյալ նախագիծը՝ *«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին մասով.* *«1.1. Հայաստանի Հանրապետության կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների*	Ընդունվել է	Չի ընդունվել

			ղեկավարները խմբակցության գրության հիման վրա գրությունն ստանալուց եռօրյա ժամկետում պարտավոր են ներկայանալ Ազգային ժողով և պատասխանել խմբակցության անդամների հարցերին:»:		